Լավությո՛ւն արա, ջուրը գցի՛ր մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS 2020, №3 (48), հուլիս-օգոստոս, БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ» ՊՈՒՐԱԿԸ

ԵԹԵ ԿՈՐՑՆԵՆՔ ԱՐՑԱԽԸ. ԿՇՐՋԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԷՋԸ...

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մոնթեի հուշաքարը

Մեր ժողովրդի պատմության ամենափառավոր էջերից է Արցախյան ազատամարտը, որի ընթացքում անմահության ու հավերժի ճամփա բռնեցին հազարավոր հայ քաջորդիներ:

Անմահներից շատերը թեև նահատակվեցին, բայց դարձան նորօրյա հերոսապատումի՝ սերունդներ դաստիարակող կերպար ու խորհրդանիշ, իրենց սխրանքով ու սուրբ զոհողությամբ՝ ապրողներիս կյանքն իմաստավորող միշտ ներկա ուսուցիչներ:

1992 թ. հունիս-հուլիսին նահատակվեցին Վլադիմիր Բալայանը, Լեոնիդ Ազգալդյանն ու Վարդան Ստեփանյանը (Դուշման), ովքեր մշտապես նշյալ կերպարների շարքում են:

Մեկ տարի անց՝ 1993 թ. հունիսի 12-ին, Աղդամի տարածքում՝ Մարզլի բնակավայրի մոտակայքում դարանակալած

թշնամու կրակած արկի բեկորից զոհվեց Մոնթե Մելքոնյանը՝ համաժողովրդական սիրո արժանացած պանծալի Ավոն:

Հայերենից բացի՝ ճապոներենին և արևելյան ու եվրոպական մի քանի լեզուների կատարելապես տիրապետող, Բերկլիի համալսարանը «Հնագիտություն» և «Ասիայի պատմություն» մասնագիտական վկայականներով ավարտած Մոնթե Մելքոնյանը, թողած ամեն ինչ՝ անձնական բարեկեցության ու երջանկության բոլոր հնարավորությունները, հայրենի հողի և նախնիների արյան կանչով դժվարին պահին արտերկրից վերադարձավ Հայաստան:

Նա խորությամբ գիտեր հայոց պատմությունն ու մշակույթը, համաշխարհային քաղաքակրթության համապատկերում ուսումնասիրել էր խոր հնադարի Վանի թագավորության դամբարանները, 19-րդ դ. վերջի ու 20-րդ դարասկզբի հայոց ցեղասպանության ու հայերիս հայրենազրկման պատմությունն ու եկել այն վճռական համոզման, որ Հայաստանը պետք է ազատագրել բռնազավթիչ թշնամիներից:

Արցախյան ազատամարտում Մոնթեն սկզբում Մարտունու ջոկատի, ապա մի քանի զորամիավորումների հրամանատարն էր: Լեգենդացած այդ հերոսն անառիկ պահեց Մարտունու շրջանն ու ազատագրեց Քարավաճառը:

Մարտական գործողությունների ընթացքում ամենուր էր Մոնթեն: Շուշի բերդաքաղաքից հետո Քաշաթաղի շրջանի ազատագրմանը նույնպես մասնակցում էին նրա հրամանատարությամբ գործող ջոկատները:

Ռազմարվեստի իրոք բացառիկ գիտակը, համագործակցելով ազատամարտի մյուս ուժերի հետ, հիմնականում իրագործեց գերագույն նպատակը՝ փրկեց Արցախը խորհրդային ժամանակների ադրբեջանական գերությունից;

Հերոսների կյանքում երբեմն լինում են ցավալի, ողբերգական պատահականություններ: Այդպես եղավ նաև Մոնթեի պարագայում: Իր մարտական ընկերների հետ՝ 6 հոգով, իր մեքենայով Մոնթեն շտապում էր միանալ Մարզլին ազատագրած և հաղթականորեն առաջ շաժվող ջոկատներին: Բայց հենց այստեղ՝ Մարզլիում, թշնամու քողարկված զրահամեքենայից արձակված արկի բեկորից նա մահացու խոցվեց: Զոհվեց Մոնթեն՝ ռազմական ականավոր գործիչը, Անդրանիկի, Նժդեհի ու մյուս հերոսապետերի արժանավոր հաջորդը:

Զոհվեց նաև մարտական ընկերներից Սարիբեկը, ծանր վիրավորվեց վարորդը՝ Կոմիտասը, իսկ վիրավոր Հովիկն ու Սարոն մեկ ժամից ավել անձնուրաց մարտնչեցին թշնամու դեմ և թույլ չտվին, որ թուրքը մոտենա սիրելի զորահրամանատարին, մինչև Մարտակերտից օգնության հասան տղաներին: Նահատակներին ու վիրավորներին տուն տարան, իսկ Մոնթեին հաջորդ օրը տեղափոխեցին Երևան: Եռաբլուրում՝ զինվորական Պանթեոնում, հունիսի 19-ին տեղի ունեցավ վերջին հրաժեշտը և հուղարկավորությունը:

Այժմ, Ստեփանակերտ-Երևան մայրուղու Բերձոր-Գորիս հատվածի աջ եզրին՝ անտառապատ սարալանջի ստորոտում, ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի պուրակն է՝ հիմնված 2003 թ. հունիսի 12-ին՝ նրա նահատակության 10-րդ տարելիցի օրը: Բազալտե հուշաքարի

դիմերեսին Մոնթեի՝ մեծախորհուրդ կարգախոսն է. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»: Հուշաքարի դարձերեսին նրա հիմնադրման մասին վիմագրությունն է. «Հիմնարկվեց մեծ հայրենասեր, Արցախի նվիրյալ, ամերիկահայ Վահե Ղազանչյանի միջոցներով և «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» օժանդակությամբ»:

Արցախի մեծ բարեկամ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի երկար տարիների դեկան, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի դերը մեծ է Քաշաթաղի շրջանի վերաբնակեցման, վերահայացման գործում:

Տարբեր բարեգործական ծրագրեր իրականացնող հիմնադրամի նախագահն այժմ հռչակված է նաև որպես ամենաշատ ծառ տնկող անձնավորություն:

Քաշաթաղի շրջանում, հատկապես Բերձոր քաղաքի մուտքերի մոտ, 20-ից ավելի պուրակ ու այգի, ծառուղի է հիմնվել: Այժմ հազարավոր ծառեր՝ հատկապես ընկուզենիներ, սոսենիներ, մրգատուներ, զարդարում են շրջանի Աղավնո գյուղից մինչև Շուշիի ենթաշրջանի Բերդաձոր

Մոնթեի հուշաքարի դարձերեսը

տանող մայրուղու եզրերը: Հիմնվել են հանգստի կետեր, որոնք ծառայում են անցորդներին: Տարեկան առնվազն երկու՝ գարնանային և աշնանային ծառատունկ էր կազմակերպում Գ. Մելիքյանը՝ ԵՊՀ ուսանողների, դասախոսների և ղեկավարության մասնակցությամբ: Ծառատունկը վերածվում էր տոնախմբության:

Հաճախ այդ աշխատանքներին մասնակից էին լինում Արցախի նախագահն ու այլ պետական այրեր, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարները, տեղական տարբեր կառույցների աշխատակիցներ, դպրոցականներ:

Ինքս բազմիցս մասնակից եմ եղել նրա կազմակերպած ծառատունկերին, լուսաբանել թերթերում ու հեռուստատեսությամբ: Զրուցել եմ տասնյակ ուսանողների հետ, ովքեր առաջին անգամ ոտք են դրել Արցախ, հատկապես ազատագրված ու վերահայացած Քաշաթաղ, և բոլորի կարծիքը մեկն է՝ տնկելով թեկուզ մեկ ծառ, այդ գործողության մասնակիցը հոգով կապվում է այս հողին: Եվ շատերը նաև 2-րդ, 3-րդ անգամ էին մասնակիցը դարձել ծառատունկի, ու իրենց զգում էին հարազատ տանը:

Լեոնիդ Ազգալդյանի, Դուշման Վարդանի, հիմնադրամի բարեգործների, ականավոր գրողների ու մշակութային գործիչների պուրակների շարքում է Մոնթեին նվիրված պուրակը:

Հուսանք՝ թագաժահրից հետո կյանքը բնական հուն կմտնի և աշնանից կշարունակվի այդ հայրենանվեր ու ամենաբարի միջոցառումներից մեկը:

Ամեն անգամ, երբ անցնում եմ Ստեփանակերտ-Երևան մայրուղու այս հատվածով և հիացումով դիտում արդեն բերքատու այգիները, հրաշագեղ ծառուղիներն ու պուրակները, մտովի հիշում եմ Գուրգեն Մելիքյանի ոգևորությունը, երբ տնկվում էր առաջին ծառը, և ժամեր անց ամբողջանում պուրակը: Այսպես Երևանի պետական համալսարանի 100-ամյակի պուրակում տնկվեց 10 000–րդ ծառը:

«Մերան» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր
ՁՈՒՐԱԲ ԸՌՔՈՅԱՆ

"COW" PROJECT 2020: LIST OF RECIPIENTS & SPONSORS

#	Name	Residence	# of child	# of cow	Ear #	Sponsors
455	Sargsyan Armine (widow)	Shushi, Hin Shen community	4	1st	07209	Rafik Bazikian /USA/
456	Mkrtchyan Armenuhi Mkrtchyan Gevorg	v. Shirak	6	2nd	5106	Victor Grigory /USA/
457	Shamamyan Shoghik Harutyunyan Nver	c. Berdzor	4	1st	3369	Hayrapetian Eleanora & Armen /USA/
458	Agakhanova Mariam Grigoryan Ruben	c. Mijnavan	9	3rd	3382	Khanlarian Albert & Sevada /USA/
459	Torosyan Ani Avagyan Gevorg	v. Hak	5	1st	3353	Martirosian Timmy & Sedik /USA/
460	Madoyan Anjela Movsisyan Ashot	c. Kovsakan	4	1st	3383	Kalognomos Medea & Alexander /USA/
461	Sargsyan Laura Blbulyan Karen	v. Mirik	5	1st	3365	Baghdasarian Alec & Alenoush /USA/
462	Stepanyan Nune Vanoyan Arsen	v. Ghazarapat	9	2nd	3396	Vahan Aladadi /USA/
463	Bazunts Sirvard Bazunts Gagik	v.Ishkhanadzor	7	3rd	3399	Avanessian Rima & Norik /USA/
464	Baghdasaryan Susanna Harutyunyan Andranik	v. Yeghtsahogh	4	1st	4820	Avanessian Nora (Noramayr) & Harmik /USA/
465	Petrosyan Lusine Petrosyan Armen	v. Yeghtsahogh	4	1st	4819	Tony S. Kahve /Great Britain/
466	Margaryan Diana Nurijanyan Grigor	v. Mirik	5	1st	3327	Ter-Sahakian Diana & Vrej /USA/
467	Margaryan Ani Yegiazaryan Armen	v. Goghtanik	6	2nd	3345	Kyureghian Emma & Varujh /USA/
468	Gogchyan Lilit Petrosyan Tigran	v.Ishkhanadzor	6	2nd	3361	Papayans Sheila /USA/
469	Khachatryan Astghik Tamaryan Ashot	c. Kovsakan	5	1st	3362	Zakian Astghik Star /USA/
470	Tamaryan Anna Chitchyan Petros	c. Kovsakan	6	1st	3350	Yegiyants Sara, M.D. /USA/
471	Khosrovyan Elena Poghosyan Karen	v. Herik	5	1st	3346	Abrahamyan Shoghik & Vahik /USA/

To be continued

2020 թ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

h/h	Ամսաթիվ	Անուն, ազգանուն	Վճարման նպատակ	Գումար	Համարժեք
1	08.01.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	60000	
2	09.01.20	Սարո Շահնազարի	ԽԵԱ ծրագիր	506400	800 GBP
3	13.01.20	Պողոսյան Հրաչուհի	Օգնություն	96000	
4	30.01.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	60000	
5	30.01.20	Ազիզյան Սոֆի	Օգնություն	70000	
6	10.02.20	ԵՊՀ հիմնադրամ	Ֆին. աջակցություն	300000	
7	27.02.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	60000	
8	01.04.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	60000	
9	20.04.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝մեր սիրելի մայրիկի՝ Գյուլիզար Այվազյան-Ժամկոչյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /19.04.2020/ Բեյրութ Բուրջ Համուդ	20000	
10	20.04.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ աննման Վահե Կազանչյանի հիշատակին ՝ ի փոխան ծաղկեպսակի /31.01.2020/	20000	
11	20.04.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ սիրելի Քրիստափոր Կազանչյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /20.01.2020/	20000	
12	20.04.20	Ջանգոզյան Վարդան	Օգնություն ծառերի ծրագիր՝ Խաչատուր Չափարյանի հիշատակին ՝ ի փոխան ծաղկեպսակի /28.01.2019/	48550	100USD
13	20.04.20	Մելիքյան Գուրգեն	ԽԵԱ ծրագիր՝ Նորամայր /Նորա/ և Հարմիկ Ավանեսյաններից	145650	300USD
14	06.05.20	Cowansville holdings limited C/O commonwealth trust limited drake chambers VG road town, Tortola	Charity	12007136	24980USD
15	07.05.20	G. Melikyan Multichildren family F.	For Alajajyan book print	3865120	8000USD
16	07.05.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	60000	
17	14.05.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր շատ սիրելի Ռուբեն Գրիգորյանի հիշատակին ՝ ի փոխան ծաղկեպսակի /11.11.2019/	20000	

18	14.05.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն Tony S. Kahve	491000	1000USD
19	01.06.20	Սիրեկանյան Արսեն	Նվիրատվություն	100000	
20	01.06.20	Աբրահամյան Գարուշ	Համաձայն առք ու վաճառքի պայմանագրի	5000000	
21	04.06.20	Մելիքյան Գուրգեն	ԽԵԱ ծրագիր՝ Նորայր և Ռիմա Ավանեսյաններ	242500	500USD
22	05.06.20	Միրզոյան Վարդգես	Օգնություն	60000	
23	29.06.20	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ իմ անևման հայրենասեր ընկերոջ՝ Սուրեն Վարդանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /27.05.2020/	20000	
				23,332,356	

2020 թ. ՀՈՒՆՎԱՐ – ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Հ/h	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
1	12.02.20	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	60000
2	12.02.20	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 3-րդ կուրս	60000
3	12.02.20	ԵՊՀ հիմնադրամ	Կիրակոսյան Արմեն Յուրիկի, իրավագիտ. 3-րդ կուրս	85000
4	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Խաչատրյան Արսեն Հենրիկի իրան. 4-րդ կուրս	20000
5	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Դարբինյան Մնացական Անդրանիկի իրան. 4-րդ կուրս	20000
6	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Սուքիասյան Արտյոմ Աշոտի, իրան. 3-րդ կուրս	25000
7	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Կարապետյան Տարոն Քրիստափորի, իրան. 2-րդ կուրս	25000
8	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Մուրադյան Հայկ Արայիկի, իրան. 4-րդ կուրս	25000
9	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Էրիկ Արտակի, արաբ. 3-րդ կուրս	30000
10	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Բաբիկյան Աշոտ Աշոտի, արաբ. 3-րդ կուրս	30000
11	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Տիգրան Արմենի իրան. 4-րդ կուրս	30000
12	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Հարությունյան Պերճ Արսենի, թյուրք. պատմաբան. Մագիստր. 1-ին կուրս	30000
13	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Կոստանդյան Վահան Համբարձումի թյուրք. 4-րդ կուրս	30000
14	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Սանեյան Արման Սամվելի պատմ. 5-րդ կուրս հեռակա	50000
15	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Տիգրան Արթուրի իրան. 4-րդ կուրս	60000
16	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Բաղալյան Արթուր Հրաչյայի արաբ. 4-րդ կուրս	60000
17	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Սրապյան Արա Ռաֆիկի իրան.2-րդ կուրս	60000
18	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Զաքարյան Հակոբ Վաչագանի իրան. 4-րդ կուրս	60000

19	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Մուրադյան Անուշ Վարդանի, թյուրքագիտ. 1-ին կուրս	80000
20	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդասարյան Հրայր Մոմիկի, արաբ. 4-րդ կուրս	80000
21	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Հասմիկ Կարենի, հայ. Բանասիր. 1-ին կուրս	80000
22	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Միքայելյան Անի, ժուռնալիստ. 1-ին կուրս	80000
23	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Շեյխուկ Շանթ, ԻԿՄ 4-րդ կուրս	100000
24	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Փիլիպոսյան Գոռ Սիմոնի, կիրառ. Վիճ. և տվյալ. Գիտ. 1-ին կուրս	100000
25	03.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Բաղդասարյան Լիլիանա Տիգրանի, ԻԿՄ 4-րդ կուրս	120000
26	04.03.20	Արցախի պետ.համալսարան	Սարգսյան Լուսինե, պատմ. և իրավ. 2-րդ կուրս	80000
27	04.03.20	ՀԱՊՀ հիմնադրամ	Թորոսյան Գեորգի Արմենի, 5-րդ կուրս /բացառություն/	100000
28	04.03.20	Արցախի պետ.համալսարան	Խաչատրյան Նանար Արայիկի, պատմ. և իրավ. 4-րդ կուրս	100000
29	04.03.20	ՀՃՇՊՀ հիմնադրամ	Տեր-Սահակով Արսեն Արմենի, ՃՇՀԱՀ 4-րդ կուրս	120000
30	04.03.20	Հայաստանի ամերիկյան համալսարան	Սարգսյան Իոաննիս-Սարանդոս, հում և հասարակ. Անգլ. Հաղորդ. 2-րդ կուրս	150000
31	05.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Նաիրա, կենսաբ. 3-րսդ կուրս հեռակա	80000
32	11.02.20	Շուշիի Գյուրջյանի անվան արվեստի ինստիտուտ	Սայամյան Արմեն Վաչիկի, արվեստի բաժին 4-րդ կուրս	100000
33	17.03.20	Գրիգոր Նարեկացի համալսարան	Խաչատուրյան Դավիթ, ՆԶՊ 4-րդ կուրս հեռակա	50000
34	17.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	30000
35	17.03.20	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 3-րդ կուրս	30000
36	27.04.20	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. Կրթաթոշակ, Սարգսյան Հասմիկ ֆարմացիա մագիստր. 1-ին կուրս	30000
37	27.04.20	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 3-րդ կուրս	30000
38	28.04.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Մաջիդ Վալիօլլահ Քարիմի, իրանագիտ. Ասպիրանտ. 1-ին կուրս	150000
39	04.05.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Փիլիպոսյան Լևոն, Արաբագիտ. 4-րդ կուրս	30000
40	04.05.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Մխիթարյան Խաչատուր, թյուրքագիտ. 4-րդ կուրս	30000
41	04.05.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Սեփանյան Սիսիան, թյուրքագիտ. 4-րդ կուրս	200000
42	08.06.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Մանասյան Մարիամ թյուրքագիտ. 3-րդ կուրս	50000
43	08.06.20	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Գյուլումյան Գևորգ հայ. բանասիր. 4-րդ կուրս	50000
				2,810,000

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐ, ՈՐՈՆՑՈՎ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՓՈԽԱՆՑԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հայաստան
Account name: **Gurgen Melikian's Kashatagh Multi-Children Family Foundation**
Bank Name: **Ardshininvest Bank Kashatagh Branch**
SWIFT Code: **ASHBAM22**
Account Number (AMD): **247380007473 0000**
Account Number (USD): **247380007473 0001**
Account Number (EUR): **247380007473 0010**

ԱՄՆ
Bank Name: Bank of America
Account Name: GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMILY FOUNDATION OF KASHATAGH
Account Number (USD): 3250 3528 6985

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ,, պրոֆեսոր

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ: **Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36, 55 – 25 – 37, 52- 29- 36:**